ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ն-ՀՄ-02/478/24
«10» հուլիս 2024թ.

Գյումրի համայնքի
ղեկավար Վարդգես Սամսոնյանին

Հարգելի պարոն Սամսոնյան,

Հայտնում ենք Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 27-ին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Գյումրի քաղաքում իրականացնելու է «ՖեստիՎառ» երաժշտական փառատոնը: Միջոցառումը պատշաճ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է սույն թվական հուլիսի 22-ից ապահովել ոստիկանական երկու մեքենայով՝ տեխնիկական աշխատանքներն անխոչընդոտ կազմակերպելու համար:

Հուլիսի 22-ից 28-ը ներառյալ՝ անհրաժեշտ է փակել Գյումրու Վարդանանց հրապարակի Հոկտեբեր կինոթատրոնի դիմացի երթևեկելի հատվածի երրորդ գիծը:

Հուլիսի 23-ին փակել Գյումրու քաղաքապետարանի դիմացի չորրորդ գիծը:

Հուլիսի 26-ից 27-ը փակել Գյումրու քաղաքապետարանի դիմացի և Հոկտեմբեր կինոթատրոնի դիմացի երթևեկելի հատվածներն ամբողջությամբ:

Հուլիսի 22-ից սկսած մինչև 28-ը ապահովել շուրջօրյա անվտանգություն/աշխատակիցներ/:

Հուլիսի 22-ից 23-ը տրամադրել ջրատար մեքենա՝ բեմի անվտանգության տարանները լցնելու համար/ մոտ 16 տոննա/

Հուլիսի 23-ից 28-ը ներառյալ անհրաժեշտ է 150 հատ արգելափակոց՝ աշխատանքներն անվտանգ իրականացնելու համար:

Հուլիսի 22-ից 27-ը ներառյալ Գյումրու քաղաքապետարանի հարակից հատվածն ազատել մեքենաներից և փակել կայանման համար նախատեսված մայթեզրերը:

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ ceooffice@1tv.am

Հուլիսի 27-ին ամբողջությամբ փակել Վարդանանց հրապարակը և հարակից տարածքներն երկկողմանի:

Հուլիսի 27-ին կայանալիք գլխավոր միջոցառման ցուցահանդես-վաճառքի համար անհրաժեշտ է ապահովել առավելագույնը 42 տաղավար: Տաղավարների տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել գլխավոր միջոցառումից 2 օր առաջ:

Խնդրում ենք հուլիսի 27-ին կայանալիք «ՖեստիՎառ» երաժշտական փառատոնի ընթացքում ապահովել շուրջօրյա ուժեղացված անվտանգություն, շտապ օգնության և հրշեջ մեքենաների առկայություն, ինչպես նաև նշյալ տարածքներում ապահովել սանիտարական մաքրություն/այդ թվում նաև բիոզուգարանների ապահովում/:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն՝ **Հովհաննես Մովսիսյան**

Կատարող՝
Նախագծի պրոդյուսեր
Լիդիա Քարամյան
Հեռ. +374 091 65 55 08
Էլ. Հասցե՝ lidia.karamyan@1tv.am